



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

**ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

2017 թ., նոյեմբերի 22-24

**Երևան 2018**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
Տ 778

Հրատարակվում է  
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհրդի նախագահ՝**

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
- ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
- ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ  
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

SHUSHAN MOVSISYAN

## DEBT SAFETY ISSUES OF RA ECONOMY

**Key words:** *debt safety, global crisis, external debt, debt sustainability indicators, economic growth*

*Public debt has increased sharply in many countries after global financial and economic crisis. Armenia was not an exception. In 2016 public debt of the Republic of Armenia has increased 2.3 times compared to 2009, which raises the need to assess debt safety. Current state of the public debt of Armenia and its impact on economic development of the country is considered in the article.*

### ՄԱՔՍԻՄ ՄՈՒՐԱԴՅԱՆ

*Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՊՏՀ*

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

*Հիմնաբառեր. բարձրագույն մաթեմատիկա, տնտեսագիտական բուհ, դասընթացի բարեփոխում*

*Հետազոտության մեջ հիմնավորվում է, որ ներկայումս տնտեսագիտական բուհերում կարդացվող բարձրագույն մաթեմատիկայի դասընթացը կարիք ունի լայնածավալ բարեփոխումների՝ թե՛ բովանդակության, թե՛ մեթոդաբանության առումներով: Հիմնարար գաղափարների հստակ և մաքուր ներմուծումից հետո չպետք է հրապուրվել դրանց մաթեմատիկական խորացման հարցերով, այլ հարկ է կենտրոնանալ փոքր տեսանկյուններից (առաջին հերթին՝ տնտեսագիտական) դրանց մեկնաբանության և պարզաբանման վրա: Բարեփոխման հիմքում դրված կարևոր սկզբունքներից մեկը պետք է լինի մաթեմատիկական հիմնարար հասկացությունների, դասական թեորեմների, համընդհանուր ճանաչված եզրույթների անադարտությունը, դրանց հստակ և փրամաբանական մատուցումը:*

Բարձրագույն մաթեմատիկայի դասընթացը, որն այժմ կարդացվում է հետխորհրդային տարածքի գրեթե բոլոր բուհերում, ձևավորվել է անցյալ դարի 20–30-ական թվականներից էլ առաջ: Ի սկզբանե դասընթացը նախատեսված էր տեխնիկական բուհերի համար և ընդգրկում էր հիմնական մաթեմատիկական գիտությունների՝ անալիտիկ երկրաչափության, գծային հանրահաշվի, մաթեմատիկական անալիզի և դիֆերենցիալ հավասարումների մի շարք թեմաներ: Այդ դասընթացը, չնչին փոփոխություններով, այժմ էլ կարդացվում է հետխորհրդային գրեթե բոլոր, այդ թվում՝ ՀՀ տնտեսագիտական բուհերում:

Կարծում եմ՝ վաղուց ժամանակն է վերանայելու այս իրողությունը: Ապագա տնտեսագետին մատուցվող բարձրագույն մաթեմատիկական պետք է տարբերվի կենսաբանին, երկրաբանին, ինժեներին, գյուղատնտեսին ներկայացվողից: Այսինքն՝ դա պետք է լինի **ոչ թե բարձրագույն մաթեմատիկա ընդհանրապես, այլ բարձրագույն մաթեմատիկա տնտեսագիտական բուհի ուսանողի համար:**

Մաթեմատիկական գիտելիքների ինտենսիվ օգտագործումը **տնտեսագիտության դասավանդման մեջ** կարող է հանգեցնել որակական լուրջ տեղաշարժի տնտեսագետ կադրերի պատրաստման գործընթացում, ինչպես նաև ապահովել տնտեսագիտական առարկաների դասավանդման որակական նոր աստիճան:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ փաստարկենք մի շարք իրողություններ, որոնք հաստատականորեն պահանջում են բարձրագույն մաթեմատիկայի դասընթացի՝ եթե ոչ արմատական, ապա գոնե լայնածավալ բարեփոխումներ: Աշխատանքի առանցքային մտքերն ընթերցողին հասցնելու համար ընտրված է դասախոս-ուսանող երկխոսության ձևաչափը:

#### **Մտրիվացում (շահամիտրիվացում)**

**Ինչպե՞ս շահագրգռել ուսանողին, հեղափոխություն առաջացնել նրա մեջ բարձրագույն մաթեմատիկայի նկատմամբ:** Տնտեսագիտությունն ընտրած ուսանողների մի հատված կարծում է, որ բարձրագույն մաթեմատիկական դժվար թե երբևիցե իրեն պետք գա և դառնում է անտարբեր առարկայի նկատմամբ՝ որպես գերակա նպատակ ունենալով քննությունը մի կերպ հանձնելը: Ուսանողների որոշ մասն էլ մտածում է, որ եթե սովորեցնում են, ուրեմն պետք է կուրորեն յուրացնել այն ամենը, ինչ մատուցվում է:

**Դասախոս** – Բարձրագույն մաթեմատիկական տնտեսագետ ուսանողին դասավանդվող այն քիչ առարկաներից մեկն է, որը սովորեցնում է ճշգրիտ արտահայտել մտքերը, զարգացնել տրամաբանական մտածողություն:

**Ուսանող** – Համաձայն եմ, սակայն ես 12 տարի դպրոցում սովորել եմ և՛ թվաբանություն, և՛ հանրահաշիվ, և՛ երկրաչափություն, և՛ մաթեմատիկական անալիզի հիմունքներ: Կարծում եմ՝ դա բավարար է տրամաբանություն զարգացնելու համար: Մյուս կողմից՝ այժմ լայն տարածում ստացած՝ **սիրուզման թեստային համակարգն այնքան էլ չի նպաստում մտքերի ճշգրիտ արտահայտմանը կամ տրամաբանության զարգացմանը:** Այժմ ես որևէ թեորեմի ապացուցում կամ բանաձևի արտածում չեմ սովորում, բայց հաջողությամբ հանձնում եմ քննությունը: Սակայն, չնոռանանք ամենակարևորը, ես **եկել եմ նախ և առաջ մասնագիտություն սովորելու և ապագա աշխատանքի համար գիտելիքներ կուրակելու:**

**Դասախոս** – Բարձրագույն մաթեմատիկայի հիման վրա բարձր կուրսերում Դուք անցնելու եք «Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն», «Տնտեսամաթեմատիկական մեթոդներ և մոդելներ», այլ մաթեմատիկական առարկաներ, որոնք իրենց բնույթով ավելի մոտ են տնտեսագիտությանը: Մասնավորապես՝ այդ առարկաների և տնտեսագիտության հիման վրա է կառուցված **«Էկոնոմետրիկա»** առարկան. գիտություն, որը տնտեսական փոխկապակցություններն ուսումնասիրում

է մաթեմատիկական և վիճակագրական մեթոդների և մոդելների միջոցով: Կարծում եմ՝ **առանց էկոնոմետրիկ կամ մոդելավորման այլ մեթոդների կիրառման դժվար թե հնարավոր լինի ներկայացնել բակալավրիատի, առավել ևս՝ մագիստրատուրայի ավարտական լիարժեք թեզ:**

**Ուսանող** – Որքան տեղյակ եմ, տնտեսագիտության գրեթե բոլոր Նոբելյան մրցանակակիրները հետազոտություն են կատարել մաթեմատիկական մոդելներով կամ մեթոդներով:

**Դասախոս** – Եվս մեկ մոտիվացում բարձրագույն մաթեմատիկայի օգտին: Տնտեսագիտական առարկաների այժմյան դասագրքերը (մանավանդ արևմտյան ուղղվածության) լեցուն են մաթեմատիկական բանաձևերով, գծագրերով և հաշվարկներով, որոնք ուսումնասիրելու և հասկանալու համար տնտեսագետ ուսանողին անհրաժեշտ է մաթեմատիկական գիտելիքների որոշակի պաշար: Ավելին, նրան անհրաժեշտ են ոչ միայն զուտ մաթեմատիկական գիտելիքներ, այլ դրանք տնտեսագիտորեն մեկնաբանելու որոշակի ունակություն: Այս գործընթացում կարևոր դերակատարում կարող են ունենալ տնտեսագիտական թողարկող ամբիոնները, որոնք պետք է ընդհանուր գծերով նախանշեն իրենց ուսանողին անհրաժեշտ մաթեմատիկական գիտելիքների անհրաժեշտ պաշարը՝ թեմատիկ և ծավալային առումներով: Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնը պետք է սերտորեն համագործակցի այդ ամբիոնների հետ՝ ոչ միայն թեմատիկ ժամանակացույցի առումով, այլև **մաթեմատիկական ֆորմալ գիտելիքը տնտեսագիտական լեզվով թարգմանելու** համար, ինչը, կարծում եմ, չափազանց արժեքավոր և արդյունավետ կլինի տնտեսագետ ուսանողի համար: Մաթեմատիկորեն բանաձևված քանակական առնչությունների, զանազան գրաֆիկների, մակերեսների, աղյուսակների ավելի ինտենսիվ օգտագործումը մասնագիտական առարկաների մեջ կարող է որակապես բարձրացնել այդ առարկաների արդյունավետության մակարդակը:

**Ուսանող** – Որքան հասկանում եմ՝ բարձրագույն մաթեմատիկայի դասընթացում ավանդաբար ներառված են զգալի թվով թեմաներ, որոնք կարևոր են ապագա ինժեների, աստղագետի, ֆիզիկոսի և այլոց, սակայն ոչ տնտեսագետի համար: Ժամանակը չէ՞, արդյոք, վերանայելու այս իրողությունը:

**Դասախոս** – Դուք իրավացի եք, ապագա տնտեսագետին մատուցվող բարձրագույն մաթեմատիկական պետք է առատորեն համեմված լինի տնտեսագիտական օրինակներով: Եվրոպական և ամերիկյան համալսարաններում դա վաղուց իրողություն է:

**Ուսանող** – Ձեր փաստարկները համոզիչ են, այդուհանդերձ, կարևոր է իմանալ՝ մեր ապագա աշխատանքում որքանով է անհրաժեշտ մաթեմատիկայի իմացությունը: Իհարկե, նկատի չունեմ թվաբանությունը կամ ոչ բարդ հաշվարկներ կատարելու հմտությունը, այլ բարձրագույն մաթեմատիկայի գիտելիքները:

**Դասախոս** – Յավոք, բարձրագույն մաթեմատիկայի ներկայիս դասընթացն առաջացնում է մտավախություն՝ առօրյա գործնական աշխատանքում կիրառվելու տեսանկյունից: Զուտ մաթեմատիկական երկար ու ձիգ դատողությունների, անընդհատ շարքով բերվող թեորեմների, մեծածավալ ու մտացածին օրինակների արանքում գրեթե կորչում է

առարկայի գործնական ոգին: Համոզված եմ՝ խելացի տնտեսագետը գործնական աշխատանքում շահեկանորեն կարող է կիրառել մաթեմատիկական գիտելիքներ: Կարող եմ ներկայացնել հարյուրավոր աշխատանքային իրավիճակներ, որտեղ լավագույն լուծումը տալիս է բարձրագույն մաթեմատիկան: Օրինակ՝ արտադրանքի հիշ քանակի դեպքում ծախսերը կլինեն փոքրագույն կամ հասույթը՝ առավելագույն, ինչպե՞ս կանխապես որոշել նոր ապրանքով շուկայի հագեցվածության մակարդակը, ինչպե՞ս օպտիմալացնել պահեստավորման ծախսերը, գնի բարձրացումը ի՞նչ ազդեցություն կունենա հասույթի վրա, ինչպե՞ս հաշվել հիպոթեզի վճարումները կամ պարբերավճարները, ինչպե՞ս կազմակերպել ներդրումների ֆինանսական հոսքերը, ինչպե՞ս որոշել, թե սարքավորումը որքան ժամանակում կհատուցի իր գինը, ինչպե՞ս գտնել հարկային բեռի բաշխումն արտադրողների և սպառողների միջև և այլն:

**Ուսանող** – Բարձրագույն մաթեմատիկան ուսումնասիրվում է առաջին կուրսում, երբ դեռևս չունենք տնտեսագիտական լիարժեք գիտելիքներ: Մի՞թե դա խոչընդոտ չէ տնտեսագիտական բնույթի օրինակների քննարկման համար:

**Դասախոս** – Իրոք, այդպիսի մտավախություն կարող է առաջանալ, սակայն միայն առաջին հայացքից: Նախ՝ պետք է նշել, որ բարձրագույն մաթեմատիկային զուգահեռ, Ձեզ մատուցվում են նաև «Տնտեսագիտության տեսություն» և այլ մասնագիտական առարկաներ: Կարելի է կազմել դասավանդման այնպիսի ժամանակացույց, որտեղ տնտեսագիտությունը մեկ քայլ առաջ կլինի մաթեմատիկայից: Սա, իհարկե, իդեալական տարբերակ է, սակայն պետք է նշեմ, որ լիովին կարելի է սահմանափակվել այն կիրառություններով, որոնք, պահանջում են պարզագույն տնտեսագիտական գիտելիքներ կամ ամենևին չեն պահանջում: Շատ հասկացություններ կարելի է օգտագործել ինտուիտիվ մակարդակով: Միթե 2-րդ դասարանի աշակերտը, որը խնդիր է լուծում մատիտի գնի վերաբերյալ, պետք է լիարժեք պատկերացում ունենա «գին» հասկացության վերաբերյալ: Մյուս կողմից՝ տնտեսագիտականի ուսանողների զգալի մասը տնտեսագիտության հիմնական հասկացություններին ծանոթ է դպրոցական նստարանից: Ավելին, կառավարությունը ծրագիր է մշակում՝ աշակերտներին միջին դպրոցում տնտեսագիտության և գործարարության գիտելիքներ հաղորդելու համար:

**Ուսանող** – Շատ օգտակար կիրառությունների մասին խոսեցիք, սակայն մենք գրեթե անտեղյակ ենք դրանցից: Գործնական պարապմունքների ընթացքում հիմնականում զբաղված ենք արհեստականորեն բարդացված, «մի քանի հարկանի» ֆունկցիաների սահմանները հաշվելով, ածանցելով և ինտեգրելով: Որքան հասկանում եմ՝ դրանց նշանակությունը սահմանափակվում է քննությունը հաջողությամբ հանձնելու հանգամանքով:

### **Առաջարկություններ**

**1. Ուսանողին պետք է զերծ պահել ավելորդ տեղեկատվությունից:** Համարձակորեն պետք է դուրս գալ կաղապարներից՝ հրաժարվելով տնտեսագետ ուսանողին ոչ անհրաժեշտ մի շարք թեմաների մատուցումից:

**2. Վաղուց ժամանակն է բարձրագույն մաթեմատիկայի դասընթացը համալրել տնտեսագետ ուսանողին անհրաժեշտ մի շարք թեմաներով:** Այդպիսիք են, օրինակ,

«Ֆինանսական մաթեմատիկայի տարրերը», «Ֆունկցիայի առաձգականությունը» և այլն, որոնք իրենց բնույթով մաթեմատիկական են և չեն պահանջում տնտեսագիտական գիտելիքներ:

**3. Արմատապես պետք է վերափոխել գործնական պարապմունքների բովանդակությունը:** Հարյուրավոր սահմանների, շարքերի, ածանցյալների, ինտեգրալների հաշվումը բնավ անհրաժեշտ չէ ուսանողին: Առաջին պլան պետք է մղվել կիրառական օրինակները, առաջին հերթին՝ տնտեսագիտական բնույթի:

**4. Դպրոցական դասագրքերում** առկա շատ թեմաներ բուհական դասընթացում կարող են ներառվել միայն այն պարագայում, եթե «հունցվել» են տնտեսագիտական «շաղխսով» և կարող են հավելյալ նպաստը բերել բարձրագույն տնտեսագիտական կրթությանը:

**Ի՞նչ դասագրքեր են անհրաժեշտ:**

**Արևմտյան ուղղվածության դասագրքերը չափազանց պրագմատիկ են, իսկ ռուսականները՝ չափազանց ակադեմիական: Կարծում ենք՝ պետք է գերծ մնալ այս երկու ծայրահեղությունից էլ և ընտրել ոսկե միջինը:** Այս սկզբունքն է հեղինակի «Բարձրագույն մաթեմատիկա տնտեսագետների համար» եռահատոր ուսումնական ձեռնարկի հիմքում (2002 թ., 2005 թ., 2007 թ.), որը երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես ձեռնարկ ՀՀ բուհերի տնտեսագիտական մասնագիտությունների համար: Կարծում եմ՝ առաջիկայում, տնտեսագետ մասնագետների հետ համատեղ, հարկ է մշակել բարձրագույն մաթեմատիկայի չափորոշիչներ, ինչպես նաև կիրառական ուղղվածությամբ ծրագիր տնտեսագիտական բուհերի համար:

Բարձրագույն մաթեմատիկայի ծրագրի բարեփոխման հիմքում կարևոր սկզբունքներից մեկը պետք է լինեն **մաթեմատիկական հիմնարար հասկացությունների, դասական թեորեմների, համընդհանուր ճանաչված եզրույթների անադարտությունը, դրանց հստակ և փրամաբանական մատուցումը:**

Թեև առաջարկվում է դասընթացի կիրառական ուղղվածություն, սակայն իմացաբանական նշանակության ապացուցումները մշտապես պետք է գտնվեն ուշադրության կենտրոնում: Հիմնարար գաղափարների հստակ և մատչելի ներմուծումից հետո չպետք է հրապուրվել դրանց մաթեմատիկական խորացման հարցերով, այլ կենտրոնանալ տարբեր տեսանկյուններից (առաջին հերթին՝ տնտեսագիտական) դրանց մեկնաբանման և պարզաբանման վրա:

МАКСИМ МУРАДЯН

## ПРОБЛЕМЫ ИНТЕГРАЦИИ КУРСА ВЫСШЕЙ МАТЕМАТИКИ В ЭКОНОМИЧЕСКОЕ ОБРАЗОВАНИЕ

*Ключевые слова:* высшая математика, экономический вуз, реформа учебного курса

*В исследовании обосновано, что курс высшей математики в экономических вузах требует широкомасштабной реформы как по содержанию, так и по методологии преподавания.*



После ясного и доступного введения фундаментальных понятий, не следует увлекаться их углублением, а лучше сосредоточиться на их интерпретацию и разъяснение с разных точек зрения (прежде всего экономических). На основе такой реформы следует сохранить бесспорности математических понятий, классических теорем, общепризнанных терминов, их четкое и логическое изложение.

MAXIM MURADYAN

## PROBLEMS ON INTEGRATION OF HIGHER MATHEMATICS COURSE INTO ECONOMIC EDUCATION

**Key words:** higher mathematics, economic university, course reform

The research highlights that currently the Higher Mathematics course in economic universities requires a wide range of improvements both in content and in the methodology. After clear and affordable introduction of fundamental ideas, one should not be attracted to their mathematical deepening issues, but focus on their interpretation and clarification from different perspectives (primarily economic). One of the important principles laid down in the reform should be the purity of mathematical concepts, classical theorems, universally recognized terms, and their clear and logical presentation.

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ

Հայցորդ, ՀՊՏՀ

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

**Հիմնաբառեր.** բարձրագույն կրթություն, մարքեթինգային բարեփոխումներ, կրթության որակ, կրթական ծրագրեր, միասնական կրթական համակարգ

Հայաստանի կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունը ներկա փուլում սերտորեն կապված է միջազգային կրթական հանրության զարգացման միտումների հետ, որն էլ, իր հերթին, պայմանավորված է համաշխարհային տնտեսության զարգացման մեջ տեղի ունեցող անշրջելի վերափոխումներով: Ներկայումս իրականացվում են խորքային փոփոխություններ ՀՀ բարձրագույն կրթական համակարգում: Սա նշանակում է երկաստիճան համակարգ, անցում ուսուցման կազմակերպման կրեդիտային եղանակին՝ միաժամանակ նախաձեռնելով արմատական ծրագրային վերափոխումներ և խթանելով ուսանողների և դասախոսների անարգել ակադեմիական շարժունությունը, արմատավորել բարձրագույն կրթության որակի գնահատման և ապահովման եվրոպական չափանիշներ՝ նպաստելով բարձրագույն կրթության համակարգի և ԵԲԿՏ արտաքին